

ՄՇԱԿ

Տարեկան դիմել 10 թուր, կես տարվանը 6 թուր:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրության մեջ:
Գտարարադարացիք զինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարումիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարումիւնների համար զմարում են
խորանայիս լստին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. և ի ն

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամայով ԱՄՆԵՆ ՕՐ (բացի տոն և տոներին հե-
տևել օրերից):

ՊՐՕԳՐԱՄԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներ-
դիմ տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիտոն և
Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 թուր, կես տարվան 6 թ., հինգ ամս. 5 թ., չորս ամս. 4 թ.,
երեք ամս. 3 թ., երկու ամս. 2 թ. և մի ամս. 1 թուր:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւալ հասցեով. Тифлисъ, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառական մամուլը.— Ներքին տեսու-
թիւնը Նախկին Խմբագրին: Ներքին լուրերը.—
Արտաքին տեսութիւնը: Ֆրանսիայ.— Մշա-
կի հեռագիրները.— Յայտարարութիւնները.— Բա-
նասիրական: Հաւանական շարժում Գեր-
մանիայում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԱՆԴՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Ազգերի կեանքում ժամանակ առ ժամանակ
բույներ են երևում, որոնք այն աստիճանի նը-
մանողութիւն ունեն իրար հետ թէ բովանդակու-
թեամբ և թէ ձևով, որ չափերին մտածել է տա-
լիս, թէ մարդկութեան պատմութիւնը իսկապէս
ոչ այլ ինչ է, եթէ ոչ շղթայի օղակների մի երկար
շարք, բայց որոնց մէջ հազիւ կարելի է գտնել
մի քանիս կ'ը ըն ա կ ա ն օղակներ, միւսերը՝ թը-
ւում են մեր աչքին որպէս առաջինների կրկնու-
թիւններ: Եւ իսկապէս, ազգի, որպէս և իւ-
րաքանչիւր անհատի բոլոր գործողութիւնները,
լինեն նոքա հասարակ, այսինքն իւրաքանչիւր
մարդու գաղափարներն մտաւելի, լինեն նոքա
բաղադրեալ այսինքն գիտնական խոր քննողու-
թեամբ միայն բացատրելի—բոլոր այդ երևոյթ-
ները, եթէ նրանց երեւակայնութիւնը մեր աչքին աը-
ղեն մինչ ամենահասարակ մասերը անդամատած
—այն ժամանակ մեծ ձիւզ է հարկաւոր հասկա-
նալու, որ նրանց բոլորի շարժառիթները, սկզ-
բնական պատճառները թուով այնքան քիչ են,
որքան բազմաոտեսակ նրանց բաղադրութիւննե-
րից յառաջացած երևոյթները: Եւ տարաբաղդ
կը լինէինք մենք, եթէ այդ իսկ չը լինէր, ինչ
կը լինէր, ինչ նշանակութիւն կունենար պատ-
մութիւնը—այդ բառի ամենաբարձրակ մարտիկ,
եթէ նա սահմանափակվէր միւր միայն փաստեր
պատմելով, փաստեր, փաստեր և կրկին փա-
ստի, առանց ձգտելու նրանց ներքին հոգին ճա-
նաչել, առանց աշխատելու այդ բոլոր, բոտ երե-
ւոյթին անշաղկապ շարժողութիւնների մէջ զըտ-
նել նրանց ներքին կապը, պատմութեան արժէքը
—նրա տուած փաստերից բղխած փիլիսոփայու-
թեան մէջն է:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ս. Պետերբուրգի նոր ամենու-
րեայ թերթ „Порядокъ“ որ հրա-
տարակվում է Ստասիւկէվիչի խում-
բագրութեամբ, իր առաջին հա-
մարի առաջնորդող յօդուածում
պաշտպան է հանդիսանում գա-
ւառական մամուլի իրաւունքները:

Ահա մեր օրերում մի պատմական երևոյթ—
հաւանական շարժումը Գերմանիայում: Մի
շարժում, որը զարմացնել կարող է մէկին, զար-
հուրել միւսին, զգուցանել երրորդին, վառել չոր-
րորդին: Այսպէս կամ անպէս, նա ներկայացնում է
մի տխուր տեսարան:

Կարելի էր կարծել, թէ միայն լուսաւորու-
թիւնիցն է կախված այս կամ այն շարժման կա-
րելիութիւնը.— ոչ, Կարելի էր կարծել թէ միայն
խաւար երկիրներում կայ կրօնական անհամե-
բողութիւն— ոչ երբեք: Մարդու գործողութիւն-
ների վրա ազդող տարրը նորա միայն արտաքին
աշխարհից ստացած գաղափարները չեն: Միակ
գաղափարներով ոչ ոք չէ ապրում, ոչ աւելի
մի ազգ, ևս առաւել ոչ մարդկութիւնը:

Հասարակութեան կեանքը պահպանելու ձգտ-
ւումը մարդուս մէջ այն աստիճանի զօրեղ է,
որ կրիտիքական բույներում նա պատրաստ է
մոռանալ իր ամենաթանկագին և վաղուց աւան-
դած համոզմունքները: La necessité c'est la loi
suprême, կարիքը վերադոյն օրէնքն է, կրկնում
էր միշտ Հենրիկուս չորրորդը, երբ նա պիտի
ընտրէր երկու միջոցներից մէկը, որ իր համոզ-
մամբ աւելի համապատասխանում էր արդարու-
թեան գաղափարին, իսկ միւսը՝ որը աւելի հա-
մապատասխանում էր տէրութեան ներկայ պա-
հանջներին: Պետական մարդը նորանով է զանա-
գանկում միւսերից, որ նորան թոյլ է արուած
չեղովել այն գաղափարից, որը, բոլոր լուսաւոր-
ութեան մարդկանց կարծիքով, իբրեւ իդէալ կարող
է համարվել: Ինչ աւելի մեծ երջանկութիւն
կարող ենք սպասել, քան եթէ բոլոր ազգերը,
որքան և նոքա տարբեր լինեն իրենց համոզ-
մունքներով, ազգային յատկութիւններով, ձգտ-
ւումներով միասին, անխռով, իրար հետ, սիրով
կարողանային ապրել: Բայց ուր քուրդը և ուր
հայը, ուր հնդկը և ուր անգլիացին, և աւելց-
նենք՝ ուր հրէան և ուր գերմանացին: Բայց ե-
րեւակայնեցէ այսպիսի մի գրութիւն. մի երկիր,
որպէս Հայաստանը, դիցուք, խառը երկու ազ-
գութիւններից—հայ և թուրք կամ քուրդ, դուք

առական մամուլի իրաւունքները:

Լրագիրը ասում է որ գաւա-
ռական մամուլը միայն այն ժա-
մանակ գրական օգուտ կը տայ մայ-
րաքաղաքների լրագրութեանը,
երբ միջոց և իրաւունք կունենայ
ազատապէս քննել տեղական շա-
հերը, տեղական վարչութիւնների
գործունէութիւնը: Առհասարակ
գաւառական թղթակիցները մին-
չեւ այժմ զբաղեցնում էին մայ-
րաքաղաքի ընթերցողներին փոք-
րիկ, աննշան լուրերով և տեղա-
կան, փոքրցային բամբասանքնե-
րով: Մայրաքաղաքների մամուլը,
իր առանձնական դրութեամբ, ա-
սում է ուս թերթը, կազմում է
գաւառական մամուլի համար մի
տեսակ ա Ր Ո Ս Ա Տ Հ Մ Ա Ն Ե Ն
մամուլ: Հատ անգամ գուառա-
կան խմբագրին արգելվում է մին-
չեւ անգամ, առանց իրանից որ և
է գաղափարութիւն տալու, արտա-
յայտել հասարակ լուրեր մայրա-
քաղաքների թերթերից:

Չէ կարելի չը համաձայնվել
„Порядокъ“ լրագրի ընդհանուր
մտքի հետ, որ պետութեան

ընդհանուր առաջադիմութիւնը
կախված է ամեն հասարակական
երևոյթների ազատ քննելուց:
Մամուլը, եթէ առանձնական
իրաւունքներ կը վայելի պետու-
թեան մի երկու քաղաքներում,
իսկ պետութեան մեծ մասի մէջ
զարծեալ զուրկ կը լինի որ և է
ազատութիւնից, նա չէ կարող
նպաստել ամբողջ պետութեան
առաջադիմութեանը և հասա-
րակութեան մտաւոր զարգացումը
կը լինի անկատար և միակող-
մանի:

Մի ժամանակ Ռուսաստանի
մէջ պատահած հասարակական
երևոյթների վրա մտքեր յայտ-
նելու համար, մարդիկ ստիպված
էին զրել յօդուածներ արտասահ-
մանեան թէ օտար և թէ ուս-
սաց լրագիրներում: Այժմ նոյն
յարաբերութեան մէջ է գտնվում
գաւառը դէպի մայրաքաղաք-
ները: Գաւառում պատահած
անցքերի ճիշդ նկարագիրը և
այդ անցքերի մասին քննու-
թիւնը անհնարին է տպել նոյն
իսկ տեղական, գաւառական լրա-

լուսաւորված եւրոպական հասարակութիւնը
նրա հաւատացեալների դէմ: Պապի «անսխալա-
կանութեան» զօգմը կրօնական մի սկզբունք է
զարծած և ունէ բազմաթիւ հետեղներ. բայց
նայեք այս վերջին տասը տարիների յամառ
կոխներին գերմանական և ֆրանսիական տէրու-
թիւնների կողմից պապի իշխանութեան դէմ,
որը, իր հաստատած զօգմաների համապատասխան,
ամբողջ տիեզերքը կկանգնու պատրաստ պիտի
լինի: Արդ զօգմը—իրապէս մեռած տառ է և եթէ
կաթօլիկութիւնը իսկապէս մարմնացած լինէր
նրա մէջ—այսօր ոչ մի լուսաւոր մարդ չէր
գտնվի Եւրոպայում, որը չաշխատէր հիմնայա-
տակ անել կաթօլիքական կրօնը—որքան և
սուրբ և յարգելի լինէր նրա հաւատացեալների
կրօնական համոզմունքը: Ինչ—միթէ (Մշակի)
այնքան ջանքը ու աշխատութիւնը այն չէ, համո-
զեցնել, որ այլ է կրօն, այլ է—ազգութիւն: Ուրեմն
որ կրօնը չը պիտի խանդարէ ազգութեան միու-
թեան? Միայն այն պայմանով, որ ազգութիւնը մը-
նայ անխախտ—կրօնը ազատ է: Կրօնական համե-
բողութիւնը հիմնված է այն մեծ սկզբունքի վրա, որ
այն ինչ ճշմարիտ մարդուս հոգու, ուրեմն բնական
համոզմունքներին է վերաբերում, չէ կարող խան-
գարել հասարակութեան քաղաքական և ազգային
միութեան, հաստատութեան: Բայց այդ ճշմար-
տութիւնը, մինչև հանգամանքները չեն ստիպում
նրան հասկանալու և լաւ ըմբռնելու—գոհնիկ
ժողովուրդը չէ հասկանում, ուստի ևս առաւել
մեծ պարտաւորութիւն է առաջնորդող և ազգե-
ցութիւն ունեցող մարդկերանց կողմից—այդ
միտքը քարոզել և հասկանալու, Բայց և ամենա-
համբերող մարդը, երբ նա տեսնէ, որ ժողովուր-
դը իր կրօնական առանձնութիւններով տեղիք է
տալիս ազգութեան մասնաւորելուն և բաժան-
ման, նոյն մարդը, ասում ենք, ի սէր իր ազ-
գութեան կը դադարեցնէ իր սիրած գաղափարը
քարոզել: Բարեբաղդաբար մեզ համար, եթէ հետե-
ւեցնենք այն տեղեկութիւններից, որոնք մեզ
յայտնի են, զանազան կրօնները տեղիք չեն
տալիս մեզանում ազգութեան բաժանվելուն. և

գիրներում, այլ պետք է ուղարկել թղթակցութիւններ Ս. Պետերբուրգի կամ Մոսկովայի լրագիրներին:

Այդ տեսակ դրութեան մէջ, ի հարկէ, մամուլը կը լինի միշտ մի շաղկապեալ առարկայ, երբէք չի դառնայ մի օրական, կենսական պահանջ հասարակութեան համար և երբէք չի զարգանայ կատարելապէս, որպէս մի օգտաւէտ հասարակական ոյժ:

Տպագրական ազատ խօսքը այն ոյժն է որ կեանք է տալիս թէ առանձին գաւառական հասարակութիւններին և թէ նոյնպէս պետական ամբողջ մարմինն: Տպիրաւունքներ մայրաքաղաքների պրէսային, բայց չը տալ նոյն իրաւունքներ գաւառական մամուլին, նշանակում է միջոց տալ գլխին զարգանալ, բայց անդամալոյծ անել մարմնի միւս անդամները: Պարզ է որ անդամալոյծ ված մասերը ոչինչ օգուտ չեն կարող տալ գլխին:

Գաւառական լրագիրներն այն փոքրիկ գետակներն են, որոնք հոսելով դէպի մեծ գետը, սնունդ են տալիս այդ մեծ գետին: Առանց փոքրիկ ջրաբեր գետակների, մեծ գետն էլ անշուշտ կը սպառակ, կը չորանայ:

Հասարակական, պետական կեանքը մի բաղադրեալ, մի օրգանական երեւոյթ է: Մամուլը, որ մտաւոր և բարոյական ար-

տայայտութիւն է այդ կեանքի, նոյնպէս պետք է լինի բաղադրեալ և օրգանական:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալէքսանդրապոլ, 9 յունվարի

Մի քանի հայ և ռուս երիտասարդներն ու տիկիները, ամսոյս 4-ին, քաղաքիս ժողովարանի դահլիճում, յօգուտ վանայ սովետի ներկայացրին ռուսաց լեզուով «Պէպո» կոմիդիան և «Странный подв» փողովի: Տոմսակների վաճառումից գոյացաւ ընդամենը 271 ռուբլ. բայց սրանից 65 ռ. նուիրեցին հետեւեալ անձինք. Պետրոս աղա Զիթոյցեանց—24 ռ., Պ. Ս. Ղաւարեանց 9 ռ., պ. Զ. Կոստանեանց 7 ռ., պ. Զ. Լալայեանց 3 ռ., պ. խ. Խոյիցեանց 4 ռ., պ. Պրոխորով 8 ռ., պ. Թ. Սահարտեանց 4 ռ., Կապիտան Լադրով 2 ռ. և պ. Աբր. Ունջեանց 4 ռ.: Ընդամենը ժողովեցաւ 336 ռ., որից հանելով 69 ռ. 30 կ. ներկայացման և 1 ռ. 68 կ. փօստի ծախքը, մնացած 265 ռ. 2 կ. ուղարկում եմ ձեզ, պ. խմբագիր, և խնդրում եմ հասցնել ուր հարկն է:

Ներկայացման մասնակցողները պարտք են համարում յայտնել առանձին շնորհակալութիւն ժեներալ Ա. Ա. Լյնստին, որ համակրելով այն բարի գործին, մեծ օգնութիւն ցոյց տուեց թէ արդիւմը և թէ գործով: Նաև—վերոյիշեալ նուիրատու անձանց և պ. պ. Թարութիւն Ստամբուլցեանին և Մարտիրոս Բողաղլեանցին, որոնք իրանց վրա առան դահլիճի լուսաւորելու ծախքը:

Այս ներկայացման համար կարգադրող և ծախսարար նշանակված էր պ. Գ. Անշարու-մանցը, որ ուղարկելու է մոից և ելից մանրամասն հաշիւը «Кавказ» լրագրի մէջ տպելու: Պարոնին յայտնում ենք շնորհակալութիւն նրա աշխատանայ համար:

Աղ. Ալեանկերեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են, որ յունվարի 7-ին կարօի հայոց դպրոցի դասատու Աղամեանց փորձեց անձնասպանութիւն գործել: Այժմ նա պառկած է հիւանդանոցում շատ ծանր և վտանգաւոր կերպով վիրաւորված լինելով:

Պ. Ալէքսանդր Արարատեան խնդրում է մեզ յայտնել, որ նրա գիրքը «Քնարիկ Մանկական» ծախվում է Թիֆլիսի բոլոր գրաւաճառների մօտ: Գինը 40 կօպէկ է: Գուժարով առնողներին գիշտում կը լինի:

Մեզ գրում են ԳԻԼԻՋԱՆԻՑ, որ Ղարաբլի-տայից ոչ հեռու անտառներում գտնվեցաւ մի ան-յայտ մարդու դիակ, որ երևում է թէ այրված է եղել: Կարծում են, որ սպանվածը մի մաւ-կան է, որին թուրքերը բռնելով, այդ տեսակ պատժին են ենթարկել: Գաւառապետը արդէն քննութիւն է նշանակել այդ սպանութեան մա-սին:

Պ. Բոխիկ Բագրատ Նաւասարդեանց ուղարկել է մեզ 6 ռուբլ յօգուտ վանի Հիւանդանոցի:

Շնորհակալութեամբ ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ պ. Վ. Մաղաթեանի հեղինակութիւնը «Կրթ-կրթ» վոլըվիլը մէկ արարուածով, հայերէն, ռուսերէն և թուրքերէն լեզուներով: Տպված է Երևանում, 1880 թ. լին, «Պտակ» լրագրի տպա-րանում: Գինը 50 կօպէկ է:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են: «Գեկտեմբերի 31-ին, անցած 1880 թ. լի, պ. պ. Բոխիկ Կաճակահանց և Բոխիկ Ղաղաղեանց երեկոյթ մի սարքեցին Կար-սի թատրոնական դահլիճի մէջ: Այդ երեկոյթի ժամանակ պ. Խոսրով Աբասեան, հայ-կաթօլիկ երիտասարդ մի, շատ գեղեցիկ և ոգևորիչ ճա-ռախօսութիւն արաւ ազգի միութեան մասին: Մի և նոյն պ. Աբասեան ատենաբանութիւնից յետոյ նուիրեց իր և իր ամուսնու տիկին Զա-պէլի կողմից 50 ռուբլ յօգուտ վանի սովեալ-ներին: Այդ երեկոյ հաւաքվեց ընդամենը 260 ռ. յօգուտ վանի սովեալների: Հայ-կաթօլիկ ազ-գաւոր երիտասարդի ատենաբանութիւնը մեծ տպաւորութիւն գործեց բոլոր լսողների վրա:

Վրաց «Գրօէրա» լրագիրը նկարագրում է այն սարսափելի ջրհեղեղը, որ պատահել է այս օր-րա ԳՈՒԹԻՈՒՄ ամբողջ երկու շաբաթ անձրևներ զաւուց յետոյ: Բիծը վարարվելով, ջրերը միա-ցան Պալէօստամի լճի հետ: Փողոցներում նաւա-կներով էին շրջում: Ապրանքներին մեծ վնաս է հասել: Բնակիչներից շատերը յուսահատութեան մէջ են:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ յունվարի 7-ին Բագուի հայ թատրոնատէրները ներկայացրին տեղիս կլուրի դահլիճում մեր տաղանդաւոր Ն. զինակ Գարբիէլ Սունդուկեանի «Սաթաբալ» պիէսան: Այդ պիէսան Բագուի մէջ առաջին անգամ են տեսնուած: Ներկայացմանը մասնակ-ցում էին և տիկիները: Նպատակը բարեգոր-ծական էր: Արդիւնքի մի մասը նշանակված է յօգուտ Կ. Պօլսի «Միացեալ» ընկերութեան, իսկ միւս մասը յօգուտ Բագուի «Մարդասիրա-կան ընկերութեան» ընթերցարանի:

Այսօր, յունվարի 20-ին, երեկոյեան 7 1/2 ժա-մին «Կենդանիների հովանաւորութեան» Թիֆլի-սի ընկերութեան անդամները հրաւիրվում են ընդհանուր ժողովին, որ լինելու է Գիւղատնտե-սական ընկերութեան ընկալարանում, Ալէքսան-դրեան այգու մօտ, Բարեաւտնիսի փողոցի վրա: Ընկերութեան անդամներին խնդրում են իրանց անդամական վճարը մտցնել, Գօկտօր Լէվին, հրէայ բարբի, ընթերցանութիւն կանի:

Մեզ հեռագրում են ԱՐԳՈՒԻՆԻՑ: «Քաղաքիս հայ թատրոնատէր ընկերութիւնը խնդրում է ձեզ, որքան հնար է, շուտով ուղարկել մի քանի ող-բերգութիւններ, իւրաքանչիւրից չորս օրինակով ձեր ընտրութեամբ: Ընկերութիւնը շուտով սկսե-լու է իր ներկայացումները: Առաջին անգամ կը ներկայացվի «Շուշանիկ» ողբերգութիւնը: Զաւում ենք, որ ժամանակ և միջոց չունենք կա-տարել Արգուինի հայ թատրոնատէրների խնդի-րը և աւելի նպատակայարմար կը համարէինք, եթէ թատրոնատէրները դիմէին Թիֆլիսի հայոց թատրոնական կոմիտեին: Եթէ Արգուինի հայ սիրողները կամենում են, մենք կարող ենք նրանց հեռագիրը հասցնել թատրոնական կօ-միտեին:

—պիտի խոստովանենք, գուցէ մեծ մասամբ շնորհիւ (Մշակին):

Այս երկար յառաջաբանից գուցէ տեղիք տը-ւած լինէինք ընթերցողին եզրափակելու թէ այն, ինչ այժմ մեզ հետաքրքրում է—հակահրէական շարժողութիւնը Գերմանիայում—մի կրօնական հարց է: Արտաքին տեսքը թող ոչ դրին չը խաբէ—այս հարցը շատ հեռու է կրօնական բնաւորութիւ-նից: Նա մինչև անգամ տնտեսական էլ չէ, ինչ-պէս այդ գերմանական պուրլիցիստներից շատերը զօրում են համոզեցնել կոյրերին: Հապա ինչ հարց է նա,—նա ազգային հարց է, բայց մի ազ-գային հարց, որը այն աստիճանի խառն է հրէա-ների թէ կրօնական և թէ հասարակական դրու-թեան հետ, որ սկզբից կարելի էր ընդունել, թէ նա համ կրօնական, համ հասարակաց, այսինքն տնտեսական, համ էլ ազգային հարց է: Հետե-ւեալ գրուածքս ունի նպատակ պարզել հարցը, որովհետև հեղինակը համոզված է, որ հազիւ այժմեան եւրօպական կեանքում գտնվի մի այլ երևոյթ, որը կարողանայ աւելի լոյս տարա-ծել մի քանի հանգամանքների վրա, որոնց հետ հայկական ազգը իր անցեալում և ներկայով, իր քաղաքական և ազգային դրութեամբ այնքան համանման կողմեր ունէ: Մեր դրութիւնը շատ է անմիտիւար, որպէս զի խելօքանալու համար հազար ու մէկ փորձեր անենք: Թող այն թըշ-ւառ ու տառապեալ ազգը, որպէս հրէական է —այլ ազգերին և մանաւանդ մեզ իր փորձերից մի քանի օգտաւէտ դասեր տայ, և մենք ընդու-նենք այդ դասերը, որովհետև այդ պատմութիւնը ողբերգական վերջ ունէ:

Թէ ինչու՞մ է կայանում այժմեան հակահրէ-ական շարժումը—այդ յայտնի է ընթերցողներին մեր յարգելի բարեկամ Անդր. Արծրունու Բերլի-նի նամակներից և «Մշակի» բազմաքանակ յօդուածներից: Միայն թէ մի կէտ կը ցան-կանայինք աւելի պարզ որոշել, այն է, որ այդ յօդուածների մէջ իշխող տեսակետը—կրօնականն է, մինչդեռ, ինչպէս մենք վերը յայտնեցինք և հետեւեալով դեռ աւելի որոշ-

ցոյց կը տանք, այստեղ հարցը ազգայինն է: Ինչ է գերմանացի հրէան, ուստից է նա, ինչ անցեալ ունէ, ինչ էր նրա դրութիւնը, ինչ է նա այսօր, ինչ իրաւունքների տէր էր և տէր է, ինչով է զանազանվում այժմեան գերմանական հրէան միւս գերմանացիներից, ինչ դեր է խա-ղում նա հասարակական և քաղաքական գործե-րի մէջ և ինչ նշանակութիւն ունի այժմեան հակահրէական շարժումը և ինչ վերջ պիտի ու-նենայ սա—անհ այն հարցերը, որոնց պատաս-խանելու այս տողերը կը նուիրենք:

Որպէս յայտնի է, հրէաները դեռ ևս հռօմա-յեցոց կայսերութեան ժամանակ ստիպվեցան թողնել իրանց հայրենիքը, որից յետ նոքա ցրվեցան դէպի աշխարհի բոլոր անկիւնները, մանաւանդ Եւրօպա: Շատ հին անցեալը ի բաց թողնենք. ինչ մեզ հետաքրքրում է, այդ այն դարերն են, երբ հրէան, իր նոր հայրենիքում, սկսեց հասարակաց մի դեր խաղալ Եւրօպա-յում և յատկապէս Գերմանիայում: Գա՛ պատ-մութեան միջին դարերն են, այն դարերը, որոնց ազդեցութեան ներքոյ հրէական ազգը ստացաւ մի առանձին կերպարանք, մի որոշ հասարակա-կան դիրք. սեպականացրեց իրան յայտնի յատ-կութիւններ, հոգեկան, ֆիզիքական և հասարա-կական, որոնց փոխելու համար—աւանդ, կար-ծես հետեւեալ դարերը նրա համար ստեղծված չը լինէին:

Այդ մի մեծ օրինակ է, բայց և սարսափելի մի օրինակ ցեղական և ազգային այլանդակութեան, որը ընդունակ է ստատու յարուցանել մարդու ջղերի մէջ: Տխուր անցեալ—տխուր ապագայ: Դա մի զոհ է, չասենք անհամբերողութեան, այլ դառը հանգամանքների, վշտալի մարտիրոս պատմական անբռնաբարելի հարուածների: Եւ մեծ է այդ տեսարանը, զի նա դարեւոր պատե-րաղմ է ոչ թէ երկու կրօնների, այլ երկու ցե-ղերի, մէկը զբաւաւորված իր ամբապինգ ա-ւանդութիւններով և բնաւորութեան այն հաս-տատ գծերով, որոնց յառաջացնելու համար միայն հազարաւոր տարիների գործնական կեան-

քը ընդունակ է, և այդ հրէական ցեղն էր իր անցեալով, իսկ միւսը դիմաւորված իր քանակա-կան ոյժով, առանց պատմական անցեալի, նոր, տաքարիւն, անփորձ, անհաստատ, բայց ընդու-նակ նոր տէրութիւններ հաստատել, պատերազ-մել մինչ ցմահ իր անկախութեան համար, ստեղ-ծագործութեան փափաղող—բայց և մանկական միամտութեամբ—զա գերմանական ցեղն էր մի-ջին դարերի սկիզբներում, Գրիստոսից հէնց, վեց, եօթ, ութ դար յետ: Հրէան, որպէս հին, նախաքրիստոնէական քաղաքագիտութեան մի արգասիք, թողեց իր մովսիսական հայրենիքը որպէս ազգութեան մի կատարեալ տիպար, որի մէջ բոլոր անաքրիստոնէիւնները որպէս և ախտե-րը արդէն արմատացած էին և դառած անփո-փօնելի համոզմունքներ, դառած բուն հոգի և մարմին: Եւ այդ վեց և ցմահ մեծագու ընկնում է մի շրջանի մէջ, որը, ինչպէս գերմանական ցեղը, դեռ սպասում էր իր պատմութեան և ո-րի ինչ լինելը արդէն վերը նկարագրեցինք. ա-ւելացնենք այստեղ, որ այդ նոր ցեղը դեռ քրիստոնէական չէր, այլ կռապաշտ և այդ այն ժամանակներն էին, երբ ոչ դեռ Ֆրանսիա կար, ոչ Գերմանիա, ոչ Անգլիա: Կամաց կա-մաց մտնցվում է քրիստոնէութիւնը 8 և 9 դարերում Մեծ Կարլոսի հօր կառավարու-թեան տակ: Կաթօլիկ եկեղեցին ոչ թէ միայն դառնում է կրօն այդ ազգերի մէջ, այլ նա, պապի անձի մէջ իշխում է այդ ժամանակները, բոլոր այդ ազգերի սրտերին և մինչև անգամ կայսրներին, որոնց նա օծում էր: Եկեղեցու այդ իշխանութիւնը—այժմեան կղերական հոգին չէր, այլ իր ժամանակվայ լուսաւորութեան հոգին: մի հաստատ կառավարութիւն ներկայացնում էր միայն պապի իշխանութիւնը. լուսաւոր, գիտ-նական, բանիմաց մարդիկ—այդ կաթօլիկ եկե-ղեցու քահանայները, վարդապետները, հպիսկո-պոսները և յաջորդներն էին: Հռօմը—լուսաւո-րութեան կենտրոնն էր: Մեծն Կարլոսը և նրա յաջորդները տեսնում էին եկեղեցու իշխա-նութեան մէջ ոչ թէ մի մրցող ոյժ, ինչպէս

այժմեան 19 և միջին դարերի վերջերում, այլ մի զօրեղ նեցուկ ազգերը հնազանդեցնելու և նրանց կառավարելու: Մի խօսքով՝ հակասու-թիւն չը կայ հոգևոր և մարմնաւոր իշխանու-թիւնների մէջ. սէկը միւսի լրացուցիչն էր: Ինչ զարմացք, որ գերմանական երկրներում կայսր-ները նշանակում էին իրեն նահանգապետներ, երկրի կառավարիչներ ոչ թէ միայն աշխարհա-կաններին, այլ և մեծ հոգևորականներին, եպիսկո-պոսներին, արքեպիսկոպոսներին, և այլն: Նրանք մինչև անգամ նախապատու էին այս վերջիննե-րին ընտրել, որովհետև կայսերութեան թոյլ ժամա-նակներում աշխարհական կառավարիչները օգ-տվում էին դրանով միանգամայն անկախ կառա-վարելու համար. և այսպէս, երբ կայսերու-թիւնը լոկ միայն անուանով գոյութիւն ունէր, նախկին նահանգապետները դառան անկախ իշ-խաններ իրենց հոգերի մէջ, իրենց սեպական անունով.—դատաստան էին անում, տուրքեր էին վերցնում, իրաւունքներ էին բաժանում և այլն: մի խօսքով այդ ժամանակներում աւելի հա-տատովեցաւ այն ինչ որ ճորտութիւն են ան-ուանում: Երբ տնտեսական կեանքը սկսեց զար-գանալ, գոյացան քաղաքներ ամեն տեղում, որոնք սկսեցին մրցել և կռուել իրենց իշխա-նների դէմ ինքնավարութիւն ստանալու համար և յաղթեցին. իշխանները կորցրին իրենց նշանա-կութիւնը նրանցից յաղթվելով. այդ՝ 12, 13, 14, 15 դարերն էին, որոնցից յետ կրկին սկը-սում են կազմել մեծ իշխանութիւններ, որոնց ներքոյ քաղաքները կորցնում են իրենց անկա-խութիւնը: Այդ մեծ տէրութիւնները, թուով քանի քանի տասնեակներ, շարունակում էին իրենց գոյութիւնը մինչև մեր օրերը, երբ 1866 թ. լին և յետոյ ֆրանկօ-պրուսական պատերազ-մի ժամանակ միացան կրկին կազմելով գեր-մանական այժմեան կայսերութիւնը:

Բայց այստեղ կանգ առնենք և նայենք թէ ինչ է լինում քաղաքական և տնտեսական այդ փոփոխութիւնների մէջ հրէան: Պատմական այդ կարճ և անփոփ նկարագիրը տալուս նպատակը

«ԿԱՅԻՆ» լրագրում կարգում ենք, որ կարսի նախագի նախագահատ, զենեքալ Ֆրանկին, իր պաշտօնից հրաժարական է տուել հիւանդութեան պատճառով: Նորին Բարձրութիւնը ընդունել է զենեքալ Ֆրանկինու հրաժարականը:

Վերջապէս, կիրակի օր, յունվարի 18-ին, տաղվել են ԹԻՖԼԻՍԻՍ Ռուսաստանի 11 փոստերը, որոնք այդքան ժամանակ մնացել էին կովկասեան սարերում, ձիւնի և փոթորիկների պատճառով անցնել չը կարողանալով:

Կիրակի, յունվարի 18-ին ԹԻՖԼԻՍԻՍ արհեստարարների կուռքում, իշխան Ամատունու տանը, ժողով եղաւ «Մեղու Հայաստանի» լրագիրը ամենօրեայ դարձնելու նպատակով: Ներկայ էին գտնվում մատուցողապէս 30 հոգի: Նախագահը «արցունք» կամենում են արդեօք ներկայ գտնվածները, որ «Մեղուն» ամենօրեայ դառնայ, Պատասխանեցին, որ կամենում են: Այդ ժամանակ հանդիսականներից հարց առաջարկվեցաւ, թէ տարեկան ինչքան ծախս է հարկաւոր «Մեղուն» լրագիրը ամեն օր հրատարակելու համար: Պատասխանը եղաւ, թէ առ նուագը 20,000 ռ. է հարկաւոր, որից կէսը, 10,000 ռուբլ յոյս ունեն ստանալ բաժանորդներից, ուրիշն յոյս ունեն 1000 ռուբլով տնայնալ, իսկ միւս կէսը, 10,000 ռուբլ պէտք է հաւաքել ակցիաներով: Հարց եղաւ, թէ արդեօք ինչքան բաժանորդ ունի արդէն այս տարի «Մեղուն»: Այդ հարցին որոշ պատասխան չը տրվեցաւ: Այնուհետև ակցիան ստորագրութիւններ հաւաքել: Ներկայ գտնվածներից 9 մարդ ստորագրեցին 200 ռուբլանոց ակցիա, ուրիշն ստորագրութիւնից ընդամենը գոյացաւ 1,800 ռուբլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻԱՆՍԻԱ

«Հալախ» ընկերութիւնը հաղորդում է, որ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրի շրջաբերական: Համեմատ զեկտեմբերի 24-ից բոլոր պետութիւնները ընդունեցին Ֆրանսիայի առաջարկութիւնը միջնորդ դատարանի մասին: Այդ շրջաբերականի հետ միաժամանակ հեռագիր ուղարկվեցաւ Ֆրանսիական զեսպանին Աթէն:

Ընթերցողին ժամանակվայ հոգու հետ ծանոթացնել էր: Մի ժամանակում, իբր քրիստոնէական եկեղեցին, բնական կերպիւ, ինչպէս մենք տեսանք, վճռողական ազդեցութիւն ունէր բոլոր գործերի վերաբերեալ, որպէս միջին դարերի առաջին մասում, ինչ դրութեան մէջ կարող էր լինել խեղճ հրէան—այդ իւրաքանչիւրը կարող է իրեն երևակայել, Հրէան հալածված էր, նա չուներ իրաւունք, չուներ պատիւ, բայց նա խամ մարդ չէր, նա չէր պատկանում նոր ցեղերին: Նա ուներ յայտնի, պատմական կենսքով դրոշմած սովորութիւններ, աւանդութիւններ, ձրգուններ, և նոր ազգերի մէջ ընկած նա չէր կարող իրեն հնչեցնելու որքանալ, իր գլուխը կորցնել, մտաւորապէս նա իր շրջանից բարձր էր կանգնած, բայց ինչ անես, որ այդ շրջանին հրէան օտարական էր: Լաւ հասկացէ՛ք՝ հրէան ոչ թէ օտար էր, որովհետեւ նա չէր ճանաչում իր շրջանը, ոչ, նա օտար էր թէկուզ էլ սորան լաւ ճանաչէր: Այն ժամանակուայ գերմանական համայնքը բռնուած էր կաթոլիկութեան սկզբնական փուլերով ոչ թէ կրօնամոլութիւնից, ոչ թէ ֆանատիկութեանից, այլ ճշմարիտ կրօնական զգացմունքների ներքոյ, որպէս հայերը հինգերորդ դարում, և կամ որպէս այժմ աղգային ձգտումների ներքոյ,—իսկ հրէան, որպէս ոչ—քրիստոնէայ, նոյն զգացմունքները չէր կարող բաժանել: Գերմանացին ունէր իր տեղական և կամ ընդհանուր քաղաքական ձգտումներ—հրէան, որպէս օտար, անխոյր սրտով էր նայում այդ բոլոր շարժումներին, նորան չէր վառում տեղական ազգասիրութեան բոցը, նորա համար մի և նոյն էր թէ իր արժանան հայրենիքը (որը իսկապէս նորա հայրենիքը չէր) անկախ կը լինի, թէ ստորակ այլ տէրութեան, որովհետեւ նա, գործը այսպէս վճռով կամ այնպէս,—մի և նոյն հրէան պիտի մնար առանց իրաւունքների: Եւ աւելորդ է երկարացնել, հրէան օտարական էր, բայց մի օտարական, որը ոչնչով չէր կարող հաշտուել օտարական, որը ոչնչով չէր կարող հաշտուել իր նոր հայրենիքի սովորութիւնների հետ—եթէ նա երբէք հայրենիք ունէր: Եթէ մտաւորապէս

բի մէջ, որ նա մեկնի յունական կառավարութեանը, որ բերլինի կոնֆերանցիան առանձին իրաւունքներ չէ տալիս Յունաստանին: Եթէ Յունաստանը կամենում է անպատճառ պատերազմ սկսել, նա պէտք է չը յուսայ Ֆրանսիայի օգնութեան վրա: «Temps» լրագիրը կարծիք է յայտնում, որ այժմեան դժուարութիւնների պատճառը Վաղստօնի յարձակողական քաղաքականութիւնը և բերլինի կոնֆերանցիայի անհեռատնութիւնն են: Լրագիրը խորհուրդ է տալիս պետութիւններին համաձայնութեամբ գործել Յունաստանի վերաբերութեամբ, յայտնել յունական կառավարութեանը, որ նա սխալ է մեկնում բերլինի կոնգրեսի վճիռները և ապա մեկնել այդ վճիռների իսկական նշանակութիւնը: Այդպիսի մեկնութիւնը միջոց կը տայ յունական թագաւորին ընդգիծմանով ժողովրդական շարժմանը և ընդունել միջնորդ դատարանի մասին առաջարկութիւնը:

Նորիւում ֆրանսիական մինիստրների խորհուրդը քննում էր 1852 թուականի բիւզոկտի օրինադիւր: Ֆրանսիայի ֆինանսների գեղեցիկ դրութիւնը չափազանց վարձատար էր: Եւ պէտք հարկերը փոքրացրած են և 1882 թուին դիտարկութիւն կայ 47 միլիոն աւելի ծախսել, քան թէ 1881 թուին, այնու ամենայն 15 միլիոն աւելորդ է մնում, որը կառավարութիւնը մտադիր է գործածել ժողովրդական կրթութեան համար: Կամքնոտա բաւական է մնացել քաղաքային խորհուրդների անդամների ընտրութիւնից: Արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ նա կատարելապէս համաձայն է Բարտոլէմի Սենտ Լիերի հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 16 յունվարի: Պաշտօնապէս հաղորդում են, կովկասեան զօրքերի մէջ եղած գնդապետ ցեղնական տուած է գնեքալ-մայօրի աստիճան: Կովկասեան գնեքալական շրջանի ինժեներների կառավարչի օգնական գնեքալ-մայօր Կօրթով հրաժարված է իր պաշտօնից և պէտք է մնայ կովկասեան զօրքերի մէջ:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 16 յունվարի: Լօնդօնից «ԴՈՍԵՅ» լրագրին հաղորդում են յուն-

նա գերմանացուց ստոր լինէր—այդ հանգամանքներում նա պիտի ընկնէր նիւթական վերջին թշուառութեան մէջ: Բայց ոչ, նա նորանից վեր էր և հաշուի հետ լաւ հմուտ, մի սովորութիւն, որին նա վարժ էր դեռ իր հին հայրենիքում եղած ժամանակ: Խնայողական ապրուստը նորա միակ միջոցը պիտի լինէր թշուառութեան հալածման ներքոյ յաւիտենական կորստեան դոշ չը լինելու համար: Եւ իսկապէս, թէ գերմանական տէրութեան իրաւաբանութեան և թէ միջին դարերի վաճառականութեան պատմութիւնը մեղքոյց են տալիս հրէային որպէս միակ փողատէր այդ ժամանակներից: Մինչդեռ ամբողջ Եւրօպայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլն հասարակութեան փայլը—ասպետն է իր իղէալական ձգտումներով, զինեալագութեամբ և անձնական քաջութեամբ որպէս և քնքոյ սեռի հովանաւորութեամբ—հրէան, ո՛հ ինչ հակասութիւն, քաջուած մի անկրն իր մանր հաշիւն էր տեսնում, մտածելով թէ արդեօք երբ այս կամ այն ասպետը—նորա կարծիքով թիթի և անհաշիւ, ուրիշն և յիմար ասպետը—պիտի ծառան ուղարկէր նրան իր մօտ կանչելու և, ո՛հ հրէական գոտարձութիւն... Ինչ բանի համար, փող խնդրելու, փող, այո, փող: Եւ դուք պիտի տեսնէք թէ ինչպէս է արտասանում հրէան այդ փող բառը, որ հասկանաք թէ ինչ դիւթական զօրութիւն է վերաբերում նա այդ մետալին: Բայց դժուարութիւնները կրկին սկսվում են հրէայի համար: Կաթոլիկ եկեղեցին, որը, ինչպէս տեսանք, օրէնք էր միջին դարերի սկզբներում, արդեւ էր տօկօս առնելը, յայտնելով սրան մի անբարոյական գործ: Կողմը բաւալ չէ բերում: Հատուտաւ էր եկեղեցին Արիստոտելի հելլենահատուտութեան, Հապա ինչով ապրէր հրէան, որ մինչև անգամ տօկօս առնելը նորան արգելուած էր: Ուրիշն և այն բանում հրէան չէր կարող հրապարակապէս շարժվել, նա ստիպված էր այդ բոլոր գործերը գաղտնի, ծածուկ կատարել: Եւ որքան փառնաւոր էր նրա համար աշխարհը և որքան տօկօսով փող աւա, նոյնքան և մեծ տօ-

վարի 15-ից, Լօրդ Գեֆֆերինի և Գիրսի մէջ եղած ընկալութիւնների լուրը անգլօ-առասական սահմանների մասին Միջին-Ասիայում և մանաւանդ Աստիկի օտարի անապատների մէջ, չէ հաստատվում: Այդ բանակցութիւնները կատարում էին գնեքալ Մօրթօլի արշաւանքից առաջ և վերջացան հանգստացող կերպով: Անգլիայի համար Այն ժամանակից զինչ չէ փոխվել:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 15 յունվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. երկրորդ 93 ռ. 12 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ռ. 50 կ., երկրորդ 221 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 87 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 91 ռ. 87 կ., ոսկի 7 ռ. 87 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,03 պէնս, Ամստերդամի վրա 126 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 213 մարկ, Վարկի վրա 264 1/2 Ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 17 յունվարի: «Правитель. Вѣстн.» լրագրի մէջ տպված է, որ «Страна.» լրագիրը ստացաւ առաջին նախագրութիւնը:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 17 յունվարի: «ԴՈՍԵՅ» լրագիրը հաղորդում է, որ Բուխարսկի պողպատեայ գործարանը կառավարչական պատուէր ստացաւ պատրաստել պողպատեայ 56 հատ 11 դիւմետր թնդանոթներ պաշարողական արտիլերիայի և 600 հատ աւելի փոքր մեծութեան դաշտային արտիլերիայի: Նոյն լրագիրը հաղորդում է, որ հաստատված է պետական խորհուրդի առաջարկութիւնը սենատի երրորդ և հինգերորդ բաժինների երկրորդ մասերը վերցնելու մասին: Նոյն լրագրին հաղորդում են Կալուայից յունվարի 15-ից, որ փոթորիկը քանդեց նաւահանգիստը, ջարդեց մի քանի նաւեր և շատերին վնասներ տուեց: Նոյն լրագրին հաղորդում են Օգէսսայից յունվարի 16-ից, որ Բէյրութ սահմանում ծածկվեցաւ, նաւահանգստի հետ հաղորդակցութիւնը մի քանի վերատառածութեան վրա ընդհատված է: Նոյն լրագրին հաղորդում են Կերչից յունվարի 16-ից, ստուգութիւնը համարում է 10⁰ նեղուցը և Բէյրութ սահման: Նոյն լրա-

կաներ էր առնում նա գաղտնի կերպով: Փողը նորա մօտ ոչ թէ միայն բալաներ էր ծնում, այլ և թոռնիկներ...

Միակ զբաղմունք, որին կարող էր կպչել միջին դարերի հրէան—այդ առուտութիւն էր, որով հետեւ, ի միջի այլ պատճառների, այդ այն պարագանքն է, որը ամենից սովաւ ընդհարական հոգի է պահանջում: Վարչական, դատաստանական պաշտօնները ստանալ—այդ արդէն ծիծաղելի կը լինէր մեր վերին նկարագրութիւնից յետ: հասարակ արհեստները նրանց մատչելի չէին նըմանապէս, մասամբ իրենց հակակրթեան, իսկ մանաւանդ այն պատճառով, որ միջին դարերում արհեստները ամենապատուելի գործերին էին պատկանում: այստեղ տիրապետում էր ընկերակցութեան հոգին վերին աստիճանի և այդ համաքանիւր ոյժն էր, որ Եւրօպայում քաղաքները ստացան այն մեծ նշանակութիւնը, որ նոքա պատերազմեցին և յաղթեցին հողային իշխաններին և ստեղծեցին միջին դարերում ազատ քաղաքներ իրենց սեփական ինքնավարութիւններով 12, 13 և 14 դարերում: Միջին դարերի ոյժը—արհեստների, համաքանների զօրեղ կազմակերպութեան մէջն է, որպէս այսօրվայ Եւրօպայում ֆարքիկների մէջ:

Բայց և առուտութիւնը նրանց համար ազատ չէր: Նրանք առաջ վաճառված էին ամեն կողմանէ և եթէ թագաւորները, իշխանները և երկրի մեծերը ստիպված չը լինէին փողի պակասութիւնից միշտ հրէաներին դիմել—հազիւ թէ այս վերջինները մի քանի դար շարունակ իրենց գլուխը պահելու կարողութիւն ունենային: Իշխանները նրանցից միշտ փող պարտք առնելով, զրա փոխարէնը այն երախտքն էին ցոյց տալիս, որ նրանք իրաւունք էին տալիս հրէաներին այս կամ այն տօնավաճառին ներկայ գտնվել և առուտութիւն անել: և որպէս զի նրանց ոչ ոք չը կարողանայ մերժել և արգելել այդ իրաւունքը և կամ ծնծել, աքսորել և այլն, նրանց անցաթուղթեր էին պարգևում, որոնք հրէան անուանուած էր kammerknecht, այսինքն պալատական

գիրը հաղորդում է: Բարձրագոյն համաձայնութիւն տրվեցաւ գանձարանի ժամանակաւոր բաժինը փակելու համար, որ Օգէսսայից տեղափոխված էր Ս. Պետերբուրգ անցալ պատերազմի ժամանակ գործող զօրքերի ծախսերի հաշիւները վերջացնելու համար: Գանձարանի բաժինը արդէն կատարած է իր պարտաւորութիւնը:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 17 յունվարի: «ԴՈՍԵՅ» լրագրին Լօնդօնից հաղորդում են յունվարի 17-ից հետեւալը: «Times» լրագիրը հաղորդում է. Աթէնքում մի քանի գունդ յունական զօրքերին հրամայած է ուղեորվել գէպի սահմանները, միւս գունդերն էլ պատրաստ են արշաւելու: համար: Անգլիական կառավարութիւնը տեղեկութիւն է ստացել, որ թիւրքաց չալաստանի մէջ նշանաւոր ապստամբութիւն կայ:

ԼՕՆԴՈՆ, 17 յունվարի: Հարտինգտօն յայտնեց համայնքների ժողովին, որ կառավարութիւնը, վճռելով չը սեփականացնէ Անգլիային Կանդահարը, ի նկատի ունէր ռուսաց զօրքերի արշաւանքի աջողութեան կարելութիւնը թիւրքմենների դէմ: Այդ արշաւանքի այժմ յայտնի հետեւանքները չեն փոխում կառավարութեան դիտաւորութիւնները:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 18 յունվարի: Այսօր հայոց եկեղեցու մէջ բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ հանգուցեալ զենեքալ-լէյտնանտ Տէր-Ղուկասօվի հոգեհանգիստը կատարվեցաւ: Ի միջի այլոց ներկայ էին կոմս Միխայիլ Տարիելովիչ Լօրիս-Մելիքով, իշխան Սկիտապօլի Միքսկի, Գուրչին, Կերեանով և Այվազօվսկի:

ԳՈՐԻՍԱՆ, 17 յունվարի: Անգլիացիները յարձակվեցին բօքսների ամրացած դիրքի վրա Լեգենի մէջ: Բօքսները յետ մղեցին անգլիացիներին: Բօքսների կորուստները հետեւեալներն են: սպանված են՝ ցեղապետ Կիւն, մայոր Գվուլ և երեք օֆիցերներ: Վիրաւորված են մայոր Գիւդեստօն, կապիտան Լօվգրիվ և մի օֆիցեր: Զինուորներից սպանված և վիրաւորված են 171 մարդ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Ժառայ և կամ աւելի ստոր, չպալատի գեաղայն, ինչպէս որ դէհիւօրէն մեղ մօտ ասում են:

Եւ այս նեղ հանգամանքների մէջ պիտի ապրէր ինքն հրէան ամբողջ դարեր շարունակ: Սարսափելի են այն նկարագրութիւնները, որոնք մնացել են մինչ ցայսօր հրէաների միջնադարեան հալածումների վերաբերեալ: Երեւակայեցէք, որ հրէան, առանց քաղաքական իրաւունքների և աւանդից ատուած հրէան, իշխում է օտար երկրի ամբողջ առեւտրական գործերին, երևակայեցէք թէ ինչ կատաղութեան մէջ կարող է ընկնել մի գիւղ, որի բնակիչների մի ահագին մասը դաւած է հրէայի պարտատու: Այդ հանգամանքներից յետ—ինչ դժբախտութիւն պատահի, այդ հրէան է մեղաւոր: Երբ 1348 թուականին ամբողջ Եւրօպան բռնվեցաւ ժամապառնով, ինչ էք կարծում ո՛ւմ մեղադրեցին դորա մէջ: հրէաներին, մեղադրելով սրանց, որ սրանք ջրհորների մէջ թոյն են թափել—եղբայրականցէք այդ հանգամանքից այն լարված դրութիւնը, որի մէջ ապրում էին հրէաները իրենց միւս համաքաղաքացիների հետ: Այդ տարուայ հրէաներից քաշված նեղութիւնները—անկարագրելի են—կարգացէք ժամանակուայ վկայութիւնները, դօկումենտները և այն ժամանակ միայն մի գաղափար կը կազմէր թէ ինչ է նշանակում հալածանք բառը: Միակ Ստրասբուրգ քաղաքում քանի քանի հարիւր հրէաներ կոտորվեցան այդ կասկածանքի պատճառով, նոյն և ամեն տեղերում, ուր հրէաներ կային՝ Զուլցբերգայում, Գերմանիայում և այլն: Եւ այդ ոչ առաջին և ոչ վերջին անգամն էր: Մեծ իշխանները խօսք չէին կարող ասել և կամ հովանաւորել գոնէ հրէաներին՝ նոքա իրենց քաղաքական նշանակութիւնը և ոյժը արդէն վաղուց կորցրած էին:

(Կը շարունակվի)